



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝  
Շրջակա միջավայրի նախարարի  
պարտականությունները կատարող՝  
Արամ Մեյմարյան

«13» 05 2026թ.

## ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ N 061 - 26

Նախաձեռնող՝

«ԶԻԵՄԷՆ ԳՈԼԴ ՄԱՅՆԻՆԳ» ՍՊԸ

ք. Երևան, Արաբկիր վարչական շրջան, Ադոնցի փողոց 6/2/113

Գործունեությունը՝

Ոսկու կորզման հարստացուցիչ ֆաբրիկայի և  
պոչամբարների կառուցում

Վայոց ձորի մարզ, Վայք համայնք, Ջառիթափ բնակավայր

Առդիր՝ 8 թերթ:

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ  
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 061 - 26

«13» Տպիսիս 2026թ.

Վայք համայնքի Զառիթափ բնակավայրի տարածքում նախատեսվող ոսկու կորզման հարստացուցիչ ֆաբրիկայի և պոչամբարների կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝	«ՋԻԷՄԷՆ ԳՈՒԴ ՄԱՅՆԻՆԳ» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն/նախագիծ
Գործունեության տեսակը՝	«Ա» կատեգորիա
Գտնվելու վայրը՝	Վայոց ձորի մարզ, Վայք համայնք, Զառիթափ բնակավայր

**Ներածական մաս.** «ՋԻԷՄԷՆ ԳՈՒԴ ՄԱՅՆԻՆԳ» ՍՊ ընկերությունը նախատեսում է Վայք համայնքի Զառիթափ բնակավայրի տարածքում կառուցել և շահագործել ոսկու կորզման հարստացուցիչ ֆաբրիկա և երկու պոչամբարներ: Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 12-րդ հոդվածի 3-րդ մասի 2)-րդ կետի «բ» ենթակետի՝ նախատեսվող գործունեությունը դասվում է «Ա» կատեգորիայի գործունեության տեսակի:

Հարստացուցիչ ֆաբրիկայի և պոչամբարների նախատեսվող տարածքը գտնվում է Արփա գետի ձախակողմյան վտակ Փշոնքի (Վայք) գետավազանում, Վայք քաղաքից դեպի հարավ-արևելք: Մոտակա բնակավայրերն են Վայք համայնքը, Փոռ և Զառիթափ բնակավայրերը:

**Նկարագրական մաս** Լեռնագրական տեսակետից տարածքը տեղակայված է Վայքի գոգահովտում, որը բոլոր կողմերից եզրագծվում է Վայքի, Զանգեզուրի, Թեքսարի, Վարդենիսի լեռնաշղթաներով: Նախատեսվող ֆաբրիկայի և պոչամբարներին մոտ բնակավայրերն են Վայք համայնքը՝ 1,07 կմ, Զառիթափ բնակավայրը՝ 3,07 կմ և Փոռ բնակավայրը՝ 3,82 կմ:

Ֆաբրիկան զբաղեցնելու է 3,09 հա տարածք, իսկ պոչամբարները՝ 9 հա (5 հա և 4 հա), օժանդակ շինություններ՝ պահեստ, կանաչ տարածքներ և այլ ենթակառուցվածքներ 0,49 հա:

Նախատեսվող նոր ֆաբրիկայի արտադրողականությունն ըստ նախագծի կազմելու է տարեկան 300 հազ.տ: Ոսկու կորզման ֆաբրիկայում նախատեսվում է վերամշակել Սոֆի-Բինա, Ազատեկ և այլ հանքավայրերից արդյունահանված նյութառիչ տեխնոլոգիական





տրվում է առաջնային ջարդման՝ այտավոր ջարդիչ (JC80 510×800): Ջարդիչի բեռնաթփումը՝ -50+0մմ հանքաքարի խոշորությամբ ժապավենային փոխակրիչով տրվում է կոնային ջարդիչի միջանկյալ ընդունիչ բունկեր, որտեղից էլ ենթարկվում է կրկնակի ջարդման կոնային ջարդիչում (JPY100):

Պահեստարանից ջարդած հանքաքարը կարգավորվող արագությամբ ժապավենային սնուցիչով տրվում է ժապավենային փոխակրիչ, այնուհետև գնդային աղաց (MWP 2700×4000): Աղացի խյուսաթափվածքը անցնելով Ø80-100մմ բուտարայի միջով, թափվում է խյուսափոս, որտեղից այն մղվում է դեպի ուղղահայաց հիդրոցիկլոնային դասակարգիչ (d=Ø500): Բուտարայի վրայի խարամը համարվում է թափոն և հեռացվում է: Դասակարգիչների ավազները տրվում են երկրորդ փուլ մանրացման՝ գնդային աղացում (MWP 2400×3600), որը դասակարգիչի հետ աշխատում է փակ ցիկլում:

Հիմնական ֆլոտացիայի խտանյութն ուղարկվում է վերամաքման, իսկ պոչերն ուղարկվում են 4 հատ 6,5մ<sup>3</sup> ծավալով ֆլոտոմեքենա (ՓՄ-6.5, 2+2 խցիկ)՝ հիմնական ստուգիչ ֆլոտացիայի համար: Հիմնական ստուգիչ ֆլոտացիայի խտանյութը տրվում է գուռ, որտեղից այն պոնպով մղվում է հիմնական ֆլոտացիայի սնուցման կոնտակտային գուռ: Հիմնական ստուգիչ ֆլոտացիայի 1-ին և 2-րդ գծերի պոչերը տրվում են ցիանացման ցիկլ:

Ֆլոտացիոն պոչերը խտացվում են կենտրոնական շարժաբերով 30մ տրամագծով խտացուցիչում: Խտացման գործընթացը տեղի է ունենում առանց ֆլոկուլյանտների ավելացման: Ֆլոտացիոն պոչերի ջրազրկումը իրականացվում է 150մ<sup>2</sup> ֆիլտրման մակերեսով երկու հատ կերամիկական վակուում ֆիլտրով: Պոչերը ջրազրկումից հետո ժապավենային փոխակրիչի միջոցով տրվում է ցիանացման հոսքագծի նոսրացման կոնտակտային գուռ:

Վերամշակվող հանքաքարերի տեխնոլոգիական առանձնահատկություններից ելնելով հնարավոր է վերամշակումն իրականացվի միայն ֆլոտացիոն եղանակով: Այդ նպատակով ջրազրկված պոչերի ժապավենային փոխակրիչով ուղղվում են դեպի չոր պոչերի պահեստարան:

Ցիանացման ենթակա պոչերը խտացվում են 30մ տրամագծով խտացուցիչում առանց ֆլոկուլյանտների ավելացման: Ցիանացման պոչերի ջրազրկումը իրականացվում է 150մ<sup>2</sup> ֆիլտրման մակերեսով երկու հատ կերամիկական վակուում ֆիլտրով: Խտացուցիչի պարզվածքը հանդիսանում է շրջանառու ջուր և օգտագործվում են տեխնոլոգիական ցիկլում:

Ֆիլտրված ֆլոտացիոն պոչերը ենթարկվում են նոսրացման և մղվում են ցիանացման հոսքագծի կոնտակտային գուռ, որտեղից խյուսը ինքնահոս տրվում է ցիանացման և սորբցիոն տարալուծման չաներ: Այն իրականացվում է 5 հատ 135,4մ<sup>3</sup> չաներում: Կոնտակտային գուռ են տրվում նաև ցիանի լուծույթը, ինչպես նաև կրակաթը:

Ածուխի շարժը իրականացվում է խյուսի հոսքին հակառակ հագեցած ածուխը 1-ին սորբցիոն չանից տրվում է դետորբցիայի, ցիանացման պոչերը խտացվում են խտացուցիչում և չեզոքացվում ջրածնային պերօքսիդով, պարզվածքը վերադառնում է ջրի շրջանառու համակարգ՝ պոչերի նոսրացման համար, իսկ խտացված մասը տալիս են զտման մամլոզտիչներ: Մամլոզտիչների պարզվածքը վերադառնում է խտացուցիչ, իսկ ջրազրկված չեզոքացված պոչերը ինքնաթափերով տեղափոխվում են պոչամբարներ:

Ոսկին կաթոդների մակերեսից անջատվում է բարձր ճնշման տակ տրվող ջրի շիթով, որպեսզի խուսափեն ոսկու և արծաթի կորուստներից խարամի հետ: Խարամը կուտակվում



է նստացուցիչ կոնի մեջ, որը տեղադրված է անմիջապես կաթոնների լվացման սարքավորման տակ: Դեկանտացումից հետո ջրագերծված խարամը կուտակվում է չորացման վառարանում: Այդ տեղամասի բոլոր լուծույթները գտման խյուսափողով վերադառնում են պահպանման էլեկտրոլիտային ռեզերվուարներ՝ ոսկու կորուստներից խուսափելու համար: Կաթոդային նստվածքը մամլումից և չորացումից հետո ուղարկվում է ձուլման ինդուկցիոն անոթային վառարան: Պատրաստի արտադրանքը դորե ձուլվածքն է:

Ոսկուց ազատված խյուսը, տարավացումից հետո, վնասագերծվում է երկու հաջորդաբար միացված 100մ<sup>3</sup> ծավալով ռեզերվուարներում: Ցիանը քայքայելու համար նրանցից առաջինում տալիս են պերօքսիդ՝ H<sub>2</sub>O<sub>2</sub>, 60% լուծույթի տեսքով, և պղնձարջասպ, իսկ անհրաժեշտության դեպքում նաև կրակաթ՝ 10-11 սահմաններում pH-ը պահպանելու համար: Յուրաքանչյուր տանկում խյուսի գտնվելու ժամանակը կազմում է 45 րոպե:

Ցիանի չեզոքացման գործընթացը հսկվում է ավտոմատ համակարգով, որը տեղադրված է առաջին տանկի վրա: Այդ համակարգը թույլ է տալիս ապահովել pH-ի և ցիանիդի մնացորդային կոնցենտրացիայի ստաբիլ արժեքը՝ պերօքսիդի բաժնավորման միջոցով: Նատրիումի ցիանիդը մատուցվում է չոր վիճակում: Դոզավորման համար պատրաստվում է 2% լուծույթ:

**Նախագծով նախատեսվում է ֆաբրիկայի տարածքին կից կառուցել երկու պոչամբար**, որոնք տեղակայված են V-ածն կիրճում և գտնվում են ֆաբրիկայի երկու կողմերում: Պոչամբարների համար ընտրված տարածքը տիպիկ լեռնային է:

Նախատեսվող պոչամբարների համար կառուցվելու է դիմահար պատվարներ՝ առաջին պոչամբարի մակերեսը մոտ 50000մ<sup>2</sup> (5 հա) է, որտեղ տեղադրվող պոչերի ծավալը մոտ 695000մ<sup>3</sup> է, երկրորդ պոչամբարի մակերեսը մոտ 40000մ<sup>2</sup> (4 հա) է, տեղադրվող պոչերի քանակը մոտ 580000 մ<sup>3</sup>:

Պոչամբարների առաջնային պատվարները կառուցվում են քարալիցքային նյութից, որոնց վերին շեփի թեքությունը 1:2.5 է, ներքին շեփի թեքությունը՝ 1:2.0, պատվարների զագաթների լայնությունը՝ 6 մ, առավելագույն բարձրությունը առաջին պոչամբարի համար 16մ է, երկրորդ պոչամբարի համար՝ 10մ: Առաջին պոչամբարի առաջնային պատվարի կառուցման համար ընդհանուր առմամբ պահանջվելու է մոտ 41500 մ<sup>2</sup> քարալիցք և 5200 մ<sup>2</sup> կավային գրունտ, իսկ երկրորդ պոչամբարի համար՝ մոտ 22500 մ<sup>3</sup> քարալիցք և 2900 մ<sup>3</sup> կավային գրունտ: Պահանջվող քարալիցքը հանվելու է պոչամբարի տարածքից, իսկ կավային գրունտը գնվելու է գործող կավային հանքից:

Պատվաների գրունտները տեղադրվելու են 30-50սմ հզորությամբ շերտերով: Հարթեցումը և խտացումը իրականացվելու է բուլդոզերով և տոփանվելու է թմբուկավոր գլղոնով:

Պոչամբարների պատվարները և ամբողջ պոչամբարների հատակները ծածկվելու են գեոմեմբրանով: Նախատեսվում է կառուցել դրենաժային համակարգեր, որոնք բաղկացած են Ø219մմ և Ø325մմ ծակծկված խողովակաշարերից: Խողովակները տեղադրվելու են պոչամբարների հատակներին՝ գեոմեմբրանի վրա, ներծծվող ջրերը հեռացնելով առաջնային պատվարների ներքևի հատվածում նախատեսված լճակներ:

**Պատճառաբանական մաս.** Փորձաքննական գործընթացին մասնակցել են՝ առողջապահության, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի, տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունները, կադաստրի և քաղաքաշինության կոմիտեները, Վայոց ձորի մարզպետի աշխատակազմը, Գիտությունների ազգային ակադեմիան, Բնության համաշխարհային կոմիտեի հիմնադրամի



հայաստանյան մասնաճյուղը (WWF-ARMENIA) և շրջակա միջավայրի նախարարության համապատասխան ստորաբաժանումները:

Նախատեսվող գործունեության ՇՄԱԳ հաշվետվության փորձաքննությունն իրականացվել է Օրենքի պահանջներին համապատասխան: «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՕ-150-Ն օրենքի և Կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի N 2343-Ն որոշման հավելվածի՝ 2026 թվականի ապրիլի 10-ին՝ ժամը 12:00-ին Վայք համայնքի ղեկավարի նստավայրում և նույն օրը ժամը 14:30-ին Զառիթավի բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում կայացել է հաշվետվության վերաբերյալ երկրորդ հանրային լսում: Սույն թվականի ապրիլի 9-ին Օրենքի 17-րդ հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ լիազոր մարմինը /ՇՄՆ/ գործունեության ենթակա տարածքում իրականացրել է տեղազննման աշխատանքներ և դիտարկումներ՝ տարածքի առկա վիճակի և ՇՄԱԳ հաշվետվությունում ներկայացված տեղեկատվության համապատասխանությունը պարզելու նպատակով:

**Վերլուծելով լրամշակված հաշվետվությամբ ներկայացված տեղեկատվությունը և փորձաքննությամբ պարզված փաստերը, ի հայտ են եկել գործունեության իրականացմանը խոչընդոտող մի շարք հանգամանքներ՝**

1. Ընկերությանը լրամշակման փուլում ներկայացվել է պահանջ՝ փաթեթում ներկայացված ոսկու կորզման ֆաբրիկայի տեխնոլոգիական նախագծից զատ ներկայացնել նաև հարստացուցիչ ֆաբրիկայի կառուցապատման նախագծային լուծումները՝ Կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման համաձայն նախագծային փաստաթղթի հիման վրա: Համայնքի կողմից տրամադրվող նախագծման թույլտվության կամ ճարտարապետահատակագծային առաջադրանքի /ՃՀԱ/ շրջանակում, փորձաքննության ընթացքում անհրաժեշտ էր հստակեցնել՝ կառուցման փուլում տվյալ քաղաքաշինական գործունեության օբյեկտներին ներկայացվող նախագծման պարտադիր պահանջները, պայմաններն ու սահմանափակումները, կառույցների, ենթակառուցվածքների մակերեսները, հողակտորների հասցեները, հաշվի առնելով որ ֆաբրիկան և պոչամբարների /հիդրոտեխնիկական կառույց/ կառուցումը համարվում են բարձր ռիսկայնության աստիճանի (IV կատեգորիայի) քաղաքաշինական օբյեկտներ, ինչը չի ներկայացվել ընկերության կողմից:

2. Ընկերությանը լրամշակման նպատակով ներկայացված դիտողությունները և առաջարկությունները հաշվետվությունում ուղղվել են մասնակի: Ամփոփաթերթի՝ 5-րդ, 14-րդ, 17-րդ, 19-րդ, 34-րդ, 36-րդ, 37-րդ, 42-րդ, 44-րդ, 55-րդ կետերի մասով ընկերության պարզաբանումները չեն ընդունվել:

Մասնավորապես ամփոփաթերթի՝ 20-րդ, 21-րդ և 37-րդ կետերի պետք է ներկայացվեր ընդերքօգտագործման թափոնների վերամշակման պլանները և ֆինանսական երաշխիքները՝ ինչը չի ներկայացվել: Ընկերության պարզաբանումները չեն ընդունվել հիմք ընդունելով՝ ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգրք) 50-րդ հոդվածի 1-ին մասի 2)-րդ կետի 8)-րդ ենթակետ) և հանքի փակման ծրագրի մասով՝ (օրենսգրքի 58.1-րդ հոդվածի 2-րդ մասի 1)-ին կետի բ. ենթակետ: Օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, Օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետի, Օրենսգրքի 80-րդ հոդվածի 10-րդ մասի, Օրենսգրքի 55-րդ հոդվածի 5-րդ մասի 5.1-րդ կետի, 51-րդ հոդվածի 2-9-րդ և 11-րդ մասերով սահմանված կետերի, Օրենսգրքի 51-րդ հոդվածի 3-րդ կետի:



Օրենսգրքի 69-րդ հոդվածի 1-ին մասի, 18.08.2021թ.-ի N1352-Ն որոշման 4-րդ կետի սահմանված է՝ «Ընդերքօգտագործման թափոնների օբյեկտների ռեկուլտիվացիոն աշխատանքները ներառվում են ընդերքօգտագործման թափոնների կառավարման և վերամշակման պլաններով նախատեսված միջոցառումներում, իսկ այդ աշխատանքների արժեքը ներառվում է թափոնների կառավարման և վերամշակման պլանների միջոցառումների իրականացման ֆինանսական երաշխիքների գումարի մեջ», Օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետի, 37-րդ կետի, 38-րդ կետի, 40-րդ կետերի համաձայն:

3. Պոչամբարներից հնարավոր վթարային հեղեղման ռիսկերի նկարագրությունը հաշվետվությամբ տրված է, սակայն ռիսկերի կառավարման մեխանիզմները փաստացի չեն ներկայացվել կամ հիմնավորված չեն, ինչի արդյունքում վտանգների նվազեցման և վերահսկման արդյունավետությունը մնում է անորոշ: Պոչամբարների կառուցման նախագիծը չի բխում՝ Կառավարության 2017 թվականի օգոստոսի 10-ի N 984-Ն որոշման պահանջներից: Լրամշակված հաշվետվությամբ չի անդրադարձվել պոչամբարների նախագծային լուծումների համապատասխանությանը միջազգային լավագույն փորձին՝ պոչամբարների անվտանգ նախագծման և շահագործման մասով, ինչը թույլ չի տալիս գնահատել առաջարկվող լուծումների հուսալիությունն ու ռիսկերի ընդունելի մակարդակը:

4. Հանքաքարի ջարդման գործընթացից մթնոլորտ արտանետվող փոշու կանխարգելման մասով հաշվետվությամբ չեն նախատեսվել օդափոխության և ֆիլտրացիոն համապատասխան համակարգեր: Ընկերության կողմից (ամփոփաթերթի 55-րդ կետով) դրանց անհրաժեշտությունը չի հիմնավորվել՝ չնայած այն հանգամանքին, որ հաշվետվության 9.1.4.2–9.1.4.5 աղյուսակներում ներկայացված են փոշու արտանետումների զգալի ծավալներ: Միաժամանակ, հաշվի առնելով տարածքի քամիների վարդը՝ գերակշռող հարավ-արևելյան ուղղությամբ, առաջանում է փոշու տարածման բարձր հավանականություն դեպի Վայք համայնք, ինչը կարող է ունենալ բացասական ազդեցություն բնակավայրի օդի որակի և բնակչության առողջության վրա:

5. Փորձաքննության շրջանակներում իրականացվել է տարածքի տեղազննում, որի արդյունքում արձանագրվել է հաշվետվությամբ ներկայացված կոորդինատների անհամապատասխանություն փաստացի իրավիճակին: Տվյալների թերի և ոչ ճշգրիտ ներկայացման մասով ընկերությունը հանրային երկրորդ լսումից հետո համապատասխան ամփոփաթերթով ներկայացրել է **ճշգրտված կոորդինատները /առդիր՝ ամփոփաթերթ/:**

6. Համաձայն հաշվետվության՝ պոչամբարներից մակերևույթային ջրերի հեռացման համար նախատեսված է կառուցել դրենաժային համակարգեր, որոնք բաղկացած են խողովակաշարերից: Խողովակները տեղադրվելու են պոչամբարների հատակներին՝ գեոմեմբրանի վրա: Ներծծվող ջրերը հեռացվելու են առաջնային պատվարների ներքևի հատվածում նախատեսված լճակներ:

Հանրային երկրորդ լսման ընթացքում «ՇՄԱՓԿ» ՊՈԱԿ-ի մասնագետի կողմից բարձրացվել է հարց վերը նշված լճակի նշանակության, նախագծային չափերի և պոչամբարից առաջացող ջրերի սպասարկման հնարավորությունների վերաբերյալ: Ի պատասխան՝ ընկերության ներկայացուցիչը նշել է, որ լճակում կուտակվող ջրերը նախատեսվում է վերադարձնել արտադրական գործընթաց և առկա է համապատասխան մաքրման կայան: Սակայն ներկայացված պարզաբանումը չի համարվում բավարար և



արժանահավատ, քանի որ փորձաքննության ներկայացված հաշվետվությամբ մաքրման կայանը նախատեսված է բացառապես տնտեսա-կենցաղային և անալիտիկ լաբորատորիայի կեղտաջրերի մաքրման համար՝ «Յալմա» մակնիշի ինքնավար կենսաբանական մաքրման համակարգի միջոցով՝ /հաշվետվությամբ առհասարակ ներկայացված չի եղել ինչպես է ապահովելու լճակից դեպի գործարան ջրի հետ հոսքը/։ Քանի որ փորձաքննության ներկայացված փաստաթղթերում քաղաքաշինական կառույցների, ենթակառուցվածքների մասով նախագիծ ներառված չէր, նմանատիպ լճակի նախատեսումն ու կիրառումը մնում է խնդրահարույց։

Չոր պոչերում կարող են լինել մնացորդային ցիանիդի կուտակումներ, որոնք ջրային միջավայրի դեպքում՝ անձրևաջրերի, հալոցքաջրերի հետ կարող են տարածվել շրջակա միջավայրում։ Վերոնշյալի հիման վրա հիմնավոր կասկած է առաջանում, որ պոչամբարների ջրերի ամբողջ ծավալը չի ենթարկվելու համապատասխան մաքրման և հնարավոր է ուղղվի մոտակա գետային ռեսուրս, ինչը պարունակում է էական բնապահպանական ռիսկեր։

7. Համաձայն՝ «Վայոց ձոր 2» և «Վայոց ձոր 4» միկրոռեգիոնալ տարածական պլանավորման փաստաթղթերի՝ որոնք ընդգրկում են Վայք համայնքը և Զառիթափ բնակավայրը, դրանցում հանքարդյունաբերական համալիրների հեռանկարային ծրագրեր նախատեսված չեն, գոտիներ կամ համապատասխան ֆունկցիոնալ նշանակության տարածքներ ևս։ Հետևաբար, ներկայացված գործունեությունը չի բխում գործող տարածական պլանավորման փաստաթղթերի լուծումներից և առաջացնում է քաղաքաշինական համապատասխանության անհրաժեշտություն։

8. Համաձայն՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2024 թվականի փետրվարի 1-ի N 06-Ն հրամանի 119-րդ կետի՝ լեռնահարստացուցիչ կազմակերպությունների (կոմբինատներ) համար ընդունված է սանիտարապաշտպանական գոտի՝ 1000մ շառավղով, ինչը ևս անտեսվել է Ընկերության կողմից /ամփոփաթերթի 44-րդ կետ/։ Հրամանի 106-րդ կետի համաձայն՝ արտադրական օբյեկտի սանիտարապաշտպանական գոտու սահմաններում թույլատրվում է տեղակայել միայն տվյալ արտադրության սպասարկման օբյեկտներ։

Նշված գործունեության սանիտարապաշտպանիչ գոտում համաձայն տեղազննման արդյունքների գտնվում են՝ բնակելի տներ և հանգստի գոտի՝ 300մ հեռավորությամբ, մշակովի ինտենսիվ այգիներ՝ 350 մ, Փշոնք գետը՝ 470մ հեռավորությամբ՝ ինչը հակասում է գործող հրամանի պահանջներին։



## ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«ԶԻԷՄԷՆ ԳՈԼԴ ՄԱՅՆԻՆԳ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Վայք համայնքի Զառիթափ բնակավայրի տարածքում ոսկու կորզման հարստացուցիչ ֆաբրիկայի և պոչամբարների կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է պետական փորձաքննական բացասական եզրակացություն:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող՝



Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ՝

Շուշանիկ Կարապետյան